ԳԱՅԱՆԵ ՏՈՆՈՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Հայաստանը, մասնավորապես նրա արևմտյան հատվածը մշտապես եղել է ցարական արքունիքի ուշադրության կենտրոնում[19]: Ռուսաստանի Հայաստանով հետաքրքրվելու ռազմավարական, քաղաքական շարժառիթների հետ մշտապես կարևորվել է նաև տնտեսական գործոնը, որը պայմանավորել և արժեքավորել է առաջինները:

17-րդ դ.-ում Անդրկովկասի բնագծերին մոտեցող Մոսկովյան պետությունը լրջորեն մտահոգվեց ռուս-պարսկական առևտրի խնդիրներով: Թեև այդ ժամանակահատվածում Ռուսաստանի արևելյան ակտիվ քաղաքականությունը պայմանավորված էր տնտեսական, առևտրական շարժառիթներով, միաժամանակ սաղմնավորվում էին նաև ռուսական արտաքին քաղաքականության դեպի հարավ ձգվելու, ռուսական ազդեցությունն այստեղ տարածելու թե ռազմավարական, թե քաղաքական ձգտումներն ու ծրագրերը: Արդեն 18-րդ դ.-ում ռուսական արքունիքը հետամուտ էր հաստատվել մերձկասպյան շրջաններում, ողջ Անդրկովկասում և իրանական մետաքսի ամբողջ արտահանությունը Թուրքիայի ցամաքային ճանապարհներից շրջել Դնեպրի, Կասպից ծովի և Վոլգայի ջրուղիներ[20]: Այդ նպատակի իրագործումն առավել հրամայական դարձավ Հյուսիսային պատերազմի ավարտից հետո, երբ արդեն կասկած չկար, որ Բալթիկ ծովի արևելյան ափերը դառնալու է Ռուսաստանի սեփականություն: առևտրական հանգույցի դեր հաղորդելով Իրանից Արևմուտք տանող ճանապարհին: 18-րդ դ. մասնակի ձեռքբերումներն առավել ամրապնդվեցին 19-րդ դ.-ում, երբ Ռուսաստանը ներքաշվեց կապիտալիստական արտադրահարաբերությունների մեջ և նոր տարածքների, սպառման շուկաների, էժան հումքի ու աշխատուժի աղբյուրների ակնկալիքով, իր տնտեսական ազդեցությունն ընդլայնելու ձգտմամբ վարեց ծավալապաշտական քաղաքականություն քայլ առ քայլ կյանքի կոչելով նաև ռազմավարական, քաղաքական նպատակներն ու

---

[19] Ջ.Տ.Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Եր.,1960, Լ.Մ.Մելիքսետ-Բեկ, Из истории армяно-украинских отношени, сб., Исторические связи и дружба украинского и армянского народов, Ер., 1961; Д.И.Мышко, О жизни армян в Киеве в15-первой половине 17вв., сб., Исторические связи и дружба украинского и армянского народов, Киев 1965; Л.С.Хачикян, Армянские колонии на Украине в 16-17вв., сб. Великая дружба, Ер.,1954.

[20] Гурко-Кряжин, Краткая история Персии, М., 1925,с.14, նաև Б.А.Борьян, Армения, международная дипломатия и СССР, ч.1 М-Л1928г.,с.143.

պետական խնդիրները: Այդ ծրագրերի իրագործմանն էին ուղղված 19-րդ դ. առաջին երեսնամյակում մղված ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները, Ռուսաստանի տարածքային ձեռքբերումները, ցարական տիրապետության հաստատումը ողջ Անդրկովկասում, մասնավորապես Արևելյան Հայաստանում:

Այդ ժամանակաշրջանից ի վեր Ռուսական կայսրությունը նախանշեց ընդարձակ քաղաքական և տնտեսական ծրագրեր ուղղված հիմնականում Օսմանյան Թուրքիայի դեմ: Այս ուղղությունը կանխորոշված էր նրանով, որ ռուս-պարսկական պատերազմների արդյունքում ռուսական կապիտալը գրեթե մենաշնորհային իրավունքով կայուն հաստատվել էր պարսկական շուկայում, ինչն ընդունում էր անգամ տարածաշրջանում Ռուսաստանի առևտրական թիվ մեկ մրցակից Մեծ Բրիտանիան: Այսպես, 1905-1907թթ. ցուցանիշների համաձայն պարսկական շուկայում ռուսական ապրանքաշրջանառությունը կազմում էր 8.292 հազար ֆունտ ստերլինգ, անգլիականը 3.128, ֆրանսիականը 0.700, ավստրիականը 0.277, գերմանականը 0.182 հազար ֆունտ ստերլինգ[21]: Անշուշտ, ռուս գործարանատերերին չէր բավարարելու պարսկական շուկան, ուստի քաղաքական գերխնդիր էր դառնում Օսմանյան Թուրքիա ներթափանցելը: Ցարական կայսրության այդ ընդարձակ ծրագրերը բավական իրատեսական էին, քանզի 19-րդ դ.-ում սուլթանական Թուրքիան վերածվել էր հետամնաց մի պետության, որը իմպերիալիստական պետությունների ֆինանսական, ագրարային, հումքային կցորդն էր[22]: Սկզհայտ է նաև, որ Անդրկովկասում հաստատված ցարիզմն իր ազդեցությունը դեպի Անատոլիա և ողջ Թուրքիա հետևողականորեն անցկացնելու էր երկրամասին սահմանակից, նրա հետ պատմաաշխարհագրական, էթնիկական, տնտեսական, մշակութային սերտ կապեր և ընդհանրություն ունեցող Արևմտյան Հայաստանի և արևմտահայերի միջոցով: Պատահական չէ, որ ցարական Ռուսաստանը Թուրքմենչայի հաշտությամբ ամրագրելով իր հաղթանակը Հայաստանի արևելյան հատվածում, արդեն 19-րդ դ. երկրորդ կեսին իր արտաքին քաղաքականության շրջանակներում զգալի տեղ հատկացրեց Արևմտյան Հայաստանին, որն ուղղակի,

---

[21] М.Н.Покровский. Дипломатия и войны царской России в 19-ом столетии, сборник статей, М.1923, Русский империализм в прошлом и настоящем, сс.380,385.

[22] Թուրքիայի հետամնացության և նրա եվրոպական տերություններից կախման մեջ գտնվելու մասին տես К.М.Базили.,Босфор и новые очерки Константинополя, СПб1836г.с14, նաև Н.Н.Голобородько, Турция, М., Հ.Գ.Ինճիկյան, Օսմանյան կայսրության անկումը, Եր., 1984, Ջ.Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դ. 80-ական թթ., Եր.,1980թ., Ս.Սարկոսյան, Արևմտահայության վիճակը 19-րդ դ.-ի վերջերին,Եր.1968թ. և այլն:

չէր կարող տնտեսապես չհետաքրքրել ցարական կայսրությանը, մանավանդ, որ երկրամասն աչքի էր ընկնում բարենպաստ աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով, հարուստ ընդերքով: «...Թուրքահայաստանի ընդերքն առատ է... հանածոներով, որոնց շահագործման համար անհրաժեշտ է օտարերկրյա կապիտալի ներհոսք: Աստիճանաբար զարգացող ծխախոտագործությունը, բամբակագործությունը և գյուղատնտեսական արտադրության այլ բնագավառները, անասնապահության ընդլայնման համար առկա բոլոր բնական պայմանները ահա այն ամենը, որ մենք համոզվենք, որ Թուրքահայաստանը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես արտահանման, այնպես էլ երկրամասի առևտրաարդյունաբերական ձեռնարկների մեջ կապիտալ ներդրումներ կատարելու համար»[23]:

Այնուհանդերձ, սուղ տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Ռուսաստանը, տարածաշրջանում զուգակցելով տնտեսական և ռազմա-քաղաքական խնդիրները, ի տարբերություն արևմտաեվրոպական տերությունների աստիճանական նպատակասլաց քաղաքականության, հետևողականորեն չէր յուրացնում ինչպես իրեն սահմանակից արևմտահայկական, այնպես էլ թուրքական տնտեսական ընդհանուր շուկան: Ինչպես ցույց են տալիս 19-րդ դ. կեսի, 70-ական թթ., ապա նաև 90-ականների Թուրքիայի և տարբեր երկրների միջև կատարված ներմուծման և արտահանման վիճակագրական տվյալները, Ռուսաստանը շարունակ զիջում էր անգլիական, ֆրանսիական, գերմանական, ավստրո-հունգարական ապրանքաշրջանառության ցուցանիշներին[24]: Բերված փաստերը բացահայտում են սուլթանական

---

[23] Հայաստանի Ազգային արխիվ /այսուհետ ՀԱԱ/ ֆ. Архив Вермишева Христофора Аввакумовича д.33Газетные статьи и вырезки по армянскому вопросу ст., Туренкая Армения и экономические интересы России, л.78, Արևմտյան Հայաստանի բնական հարստությունների շահագործման կարևորության և անհրաժեշտության մասին տես նաև А.Яшенко „Русские интересы в Малой Азии" М.1916, с.с.19-20,29-30.

[24] Այսպես, Վ.Ի.Շերեմետի հաղորդած 19-րդ դ.-ի 50-ականներին վերաբերող տվյալներով Ռուսաստանի ներմուծումը Թուրքիա կազմում էր 23.1 մլն ֆրանկ, արտահանումը 16.2 մլն ֆրանկ, մինչդեռ Անգլիայինը կազմում էր համապատասխանաբար 141.3 և 80.0; Ֆրանսիայինը 91.9 և 131.5; գերմանական երկրներինը 33.8 և 48.8 մլն ֆրանկ /տես В.И.Шеремет ,Османская империя и Западная Европа II треть 19в.,М 1986/: 1880-ականների տվյալներով Արևմտյան Հայաստանի առևտրում Անգլիան դարձյալ մենաշնորհային դիրք էր զբաղեցնում, որի արտահանման և ներմուծման տոկոսային հարաբերությունը կազմում էր 33.3%, իսկ Ռուսաստանն ընդամենը հինգերորդն էր ներկայացնելով 5.3% ցուցանիշ և զիջելով Ֆրանսիային,Գերմանիային, Ավստրո-Հունգարիային /տես Ф.Грязнов. Военный обзор передового театра Азиатской Турции, Тифлис1897, ч. II,с.172/: Համաձայն Բ.Իշխանյանի 1898-1899թթ. վերաբերող տվյալների Անգլիայի ապրանքաշրջանառության ցուցանիշներն էին ներմուծում-արտահանում համապատասխանաբար 1 028.497 հազար փաստր /թուրքական ղրուշ. 100ղրուշը=1լիրա, թուրքական 1ոսկի/ և 462.959; Ավստրո-Հունգարիայինը 523.131 և 120.235; Ֆրանսիայինը 247.403 և 429.897; Ռուսաստանինը

Թուրքիայում առևտրա-տնտեսական որոշակի շահեր հետապնդող պետություն-ների ոչ հավասար հնարավորությունները, մասնավորապես Անգլիա-Ռուսաս-տան մրցակցային հարաբերությունների տեսանկյունից, եթե հաշվի առնենք Մեծ Բրիտանիայի Օսմանյան կայսրությունում ունեցած կայուն դիրքերը: Ցա-րիզմը բարենպաստ պայմաններում կհայտնվեր միայն տարածքային ծավալ-ման, սևծովյան նեղուցներին «հարավային Ռուսիայի տնտեսական շնչերակ-ներին[25]» տեր կանգնելու պարագայում, իսկ Անգլիան չէր կարող համակերպվել Բոսֆորի և Դարդանելի Ռուսաստանի կողմից գրավվելու մտքի հետ: Այդ իրա-դարձությունը թե առևտրական, թե քաղաքական տեսակետից խոշոր, եթե ոչ մահացու հարված կհասցներ բրիտանական հզորությանը սպառնալով կայսրության ամենաթանկ գանձ Հնդկաստանին:

Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայում Ռուսաստանի տնտեսական պասիվ թափանցման պատճառների առնչությամբ ներկայացնենք ռուս որոշ հեղինակների կատարած եզրակացությունները: Այսպես, Ն.Մ.Լագովն իր ակնարկում անդրադառնալով Ռուսաստանի Թուրքիայում տնտեսական թույլ ծավալման խնդիրներին, գրում է, որ Ռուսաստանի, մասնավորապես էրզրումի հետ կատարվող ապրանքափոխանակության փոքր ծավալները պայմանավորված են լավ ճանապարհների բացակայությամբ[26]: Այս մտքին համահունչ է նաև ռուսական պարբերականներից մեկում տպագրված «Թուր-քահայաստանը և Ռուսաստանի տնտեսական հետաքրքրությունները» հոդվա-ծը, որտեղ երկաթուղիների և մայրուղիների բացակայությունից բացի ներկա-յացվում են այլ պատճառներ ևս, ինչպիսիք են ռուս վաճառականների ոչ հետևողական վարքագիծը, գերմանական մրցակցությունը, թուրքական վար-չակարգն ու անօրինականությունները[27]: Խնդրին նմանատիպ մեկնաբանու-թյուն է տալիս նաև Գոլոբորոդկոն, նշելով, որ ռուս առևտրականները չեն ցու-ցաբերում ակտիվ ձեռներեցություն: «Ոչ մոտ հարևանությունը, ոչ երկարամյա

175.162 և 46.830 /տես Բ.Իշխանյան ,Թորքիայի ապազան, Թիֆլիս1907,1895/6-1908/9թթ. օտար պետությունների Թուրքիայում ապրանքաշրջանառության մասին տվյալներ տես նաև Բ.Իշխանյան, Գերմանիայի և Թուրքիայի տնտեսա-քաղաքական փոխհարաբերու-թյունը, քննական տեսություն, Թիֆլիս 1915, էջ46/: Ս Մարկոսյանը, հիմնվելով Սոկոլսկու հաղորդած տվյալների վրա, ներկայացնում է Թուրքիայում շրջանառության մեջ գտնվող եվրոպական կապիտալի պաշտոնական տվյալները, որի համաձայն ֆրանսիական ներդրումը կազմում էր 3.285.273317 ոսկե ֆրանկ 60%; գերմանականը 1.443186506 26%; անգլիականը 813312136 14%, իսկ Ռուսաստանի ցուցանիշները բացակայում են /տես Ս Մարկոսյան նշվ. աշխ.էջ28/:

[25] Գ.Եազըճեան.Ապտիւլ Համիտ Բ, Պէյրութ1980, էջ632:

[26] Лагов Н.М.,Армения.. Очерки прошлого,природы, культуры и пр.,Пгр.1915.

[27] ՀԱԱ Ֆ., Архив Вермишева Х.А.д.33 Газетные статьи и вырезки по армянскому вопросу.

առնչությունները մահմեդական աշխարհի հետ,-գրում է հեղինակը,- նրանց /ռուս վաճառականներին-Գ.Տ./ չեն ոգևորում/ Թուրքիայի հետ լուրջ առևտրական հարաբերությունների.../Պետական/ հովանավորչության համակարգը զրկել է մեր արդյունաբերությունը գործնական նախաձեռնությունից... Այն ժամանակ, երբ օտարերկրացի ձեռներեցները ներդնում են իրենց ողջ եռանդը, ծախսում հսկայական գումարներ, որպեսզի տիրանան /թուրքական/ շուկային, մեր վաճառականությունը անտարբերությամբ նայում է իրացման բարենպաստ պայմաններին /ի նկատի ունի Օսմանյան կայսրության սևծովյան նավահանգիստները, որոնց սահմանային հարևանությունը Ռուսաստանին առավել մատչելի էր դարձնում ծովային կապը- Գ.Տ./»[28]: Թերևս, այն, ինչ որ նշել են վերոհիշյալ հեղինակներն ունի ճշմարտության իր բաժինը. մի կողմից Թուրքիայում, այդ թվում և Արևմտյան Հայաստանում բացակայում էին օրենքը, առևտրա-տնտեսական արդյունավետ հարաբերությունների համար բարենպաստ պայմանները, կանոնակարգված, վերահսկվող մաքսային և հարկային համակարգը: Կայսրությունը զուրկ էր երկրի տարբեր ծայրամասերն իրար կապող երկաթուղային ցանցից և մայրուղիներից: Անշուշտ, առկա էր լուրջ մրցակցություն ռուսական և անգլիական, ֆրանսիական, գերմանական կապիտալի միջև, մյուս կողմից պատշաճ շահագրգռվածություն, առևտրական ջիղ չէին ցուցաբերում և գործնական քայլեր չէին ձեռնարկում ռուս վաճառականները բավարար չուսումնասիրելով թուրքական շուկան և թուրք սպառողին, չներդնելով համապատասխան գումարներ: Այս ամենին ավելանում է նաև կապիտալիստական արտադրահարաբերությունների համեմատաբար թույլ զարգացումը բուն Ռուսաստանում:

Վերը բերված փաստարկներին զուգահեռ մենք պետք է կարևորենք հետևյալ իրողությունը, որ Արևմտյան Հայաստանը ծառայում էր հենակետ ռուսական կայսրությունը դեպի Փոքր Ասիա, ողջ Մերձավոր Արևելք ուղղելու գործում: Ռուսական կառավարող շրջանները կայսրության տնտեսական ծավալումը միանշանակ կապում էին դեպի սևծովյան նեղուցներ, հարավային ջրեր դուրս գալու և Միջերկրականի ավազանում ու Մերձավոր Արևելքում հիմնավորվելու ծրագրերի և աստիճանական իրագործվող քաղաքականության հետ: «Ռուսաստանի տնտեսական կյանքի բնական ուղղությունն ընկած է դեպի հարավ, ուր տանում են ռուսական հարթավայրի գլխավոր գետային ճանապարհները, որտեղ գտնվում են շուրջ տարի գործող նավահանգիստները և որտեղից ձգվում են դեպի արևելյան ու հարավային երկրներ տանող

---

[28] Голобородько, նշվ. աշխ.էջ159-160:

ծանապարհները: Ռուսաստանը շուրջ 200 տարի ձգտում է իրագործել Պյոտր Մեծի քաղաքական պատվիրանը դեպի Բոսֆոր և Դարդանել»[29]: Ռուսական կայսրությունը իրապես շահագրգռված էր մերձավոր և միջինարևելյան շուկաներ ներթափանցելու և դրանով իսկ իր հարավային և հարավ-արևմտյան պետական սահմանները պաշտպանելու խնդրում: Արևմտյան Հայաստանը մեկնարկային ասպարեզ էր ռուսական կապիտալի համար, ինչով և պայմանավորվում էր վերջինիս համեմատաբար պասիվ մրցակցությունն ու ծավալումը Թուրքիայի ներքին, մասնավորապես արևմտահայկական շուկաներում: Ոչ պակաս կարևոր է նաև այն հանգամանքը, որ ռուսական կայսրությունը, ներթափանցելով մի այնպիսի տարածաշրջան, որտեղ ակնհայտորեն բախվում էին եվրոպական մեծ տերությունների տարաբնույթ շահերը, որտեղ պարբերաբար վիճարկվում էր վերջիններիս գերակայության և Օսմանյան Թուրքիայի լինելիության հարցը, տնտեսական խնդիրներին զուգակցում էր քաղաքականը, ռազմավարականը, երբեմն «մոռացության տալով» ցարիզմը դեպի հարավ, սուլթանական կայսրություն, սևծովյան նեղուցներ մղող առևտրա-տնտեսական նախապայմանը: «Տնտեսական ներթափանցումը ամուր հիմք դարձավ քաղաքական ազդեցության համար: Երբեմն դրանք այնպես էին միահյուսվում, որ դժվար է ասել, թե որտեղ է վերջանում տնտեսական գործոնը և որտեղ է սկսվում քաղաքականը»[30]:

Նշենք, որ որոշ հեղինակներ Ռուսաստանի Օսմանյան Թուրքիայում տնտեսական թույլ ծավալմամբ էլ պայմանավորում են ցարիզմի քաղաքական «պասիվությունն» ու անհաջողություններն այս տարածաշրջանում, մասնավորապես 19-րդ դ. 90-ական թթ.: Այսպես, Գոլոբորոդկոն նշված խնդրի կապակցությամբ գրել է. «Այն տերությունները, որոնք անկարող էին հաղթահարել տնտեսական մրցակցությունը թուրքական շուկայում, զրկվում էին նաև երբեմնի քաղաքական գերակայությունից: Նման ճակատագիր էր վիճակված նաև Ռուսաստանին»[31]: Պատմաբան Վ.Ի.Շերեմետի կարծիքով ցարիզմի սուլթանական Թուրքիայում ունեցած տնտեսական թույլ հենքն էլ կանխորոշեց ցարական կառավարության անհեռատես «հավասարակշռման» քաղաքականությունը Արևելյան հարցում և դրա «Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի հետ ընդհանուր սկզբունքներ պաշտպանելու կործանարար բնույթը»[32]: Հայ հեղինակներից Բ.Իշխանյանը համոզված էր, որ Ռուսաստանը, «իր

---

[29] А.Яшенко,նշվ.աշխ., էջ9:
[30] Голобородько, նշվ. աշխ.,էջ152:
[31] Նույն տեղում:
[32] В.И.Шеремет ,Османская империя и Западная Европа ,вторая треть 19-го в.,М 1986, с.91-92.

առևտրական հետամնացությամբ լինելով անկարող և անընդունակ մրցելու անգլիացիների, ֆրանսիացիների, գերմանացիների և այլնի հետ, ընդունակ եղավ միայն մեխելու միջազգային դիվանագիտությունը քարացած status quo-ի վրա, պաշտպան ու նախանձախնդիր դարձավ Թուրքիայի քաղաքական անձեռնմխելիության», ի տարբերություն եվրոպական տերությունների, որոնք «չունեն ամենաչնչին շահ անգամ տանելու Եվրոպայի սրտում մի միջնադարյան բռնակալ ու բարբարոս պետության փտած ու քայքայված գոյությունը»[33]: Անշուշտ, տնտեսական համեմատաբար զիջող դիրքերը ինչ-որ չափով անդրադառնում և թուլացնում էին Ռուսաստանի քաղաքական ակտիվությունն այս տարածաշրջանում: Պատմական փաստերը վկայում են նաև ռուսական կառավարող շրջանների կողմից ժամանակ առ ժամանակ դրսևորվող քաղաքական կարճատեսության մասին: Միևնույն ժամանակ անընդունելի ենք համարում Բ.Իշխանյանի ներկայացված տեսակետը այն պարզ պատճառով, որ Օսմանյան կայսրությունում status quo-ն պահպանելու քաղաքական «հեղինակը» ոչ թե ցարական «ռեակցիոն» Ռուսաստանն էր, այլև «Թուրքիան ինտենսիվ շահագործող» եվրոպան: Միաժամանակ ռուսական քաղաքական վարքագիծը տարածաշրջանում թելադրված էր ոչ միայն տնտեսական գործոններով, այլև միջազգային իրադրությամբ, այլ տերությունների հետ ցարիզմի ունեցած մեծամասամբ մրցակցային հարաբերություններով, Ռուսաստանի ներքաղաքական խնդիրներով, պետական շահերով և տարաբնույթ այլ գործոններով:

---

[33] Բ.Իշխանյան, Թուրքիայի ապագան /քննական էտյուդ/, Թիֆլիս, 1907, էջ31-32: